

## ԱՌԻԴԻՏ ՍԵՐՎԻՍ

Աուդիտորական խորհրդատվական ընկերություն  
Լիցենզավորված է ՀՀ աուդիտորական հանձնաժողովի կողմից

ՀՀ Էկոնոմիկայի Նախարար՝  
«ՓՄՁ Ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ-ի  
բաժնետերերի ընդհանուր ժողովի  
նախագահ պարոն՝ Ն. Երիցյանին

«ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ-ի  
գործադիր տնօրեն պարոն՝  
Ա. Բաղայանին

ՀՀ, ք. Երևան Ա. Արմենակյան 2/5

Երևան

24 մարտի 2010թ.

Թեմա. «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ փակ բաժնետիրական ընկերության 2009թ. տարեկան  
ֆինանսական հաշվետվության աուդիտ

Հարգելի պարոնայք

Համաձայն մեր կատարած աուդիտի, Ձեզ ենք ներկայացնում աուդիտորական եզրակացությունը  
հայերեն լեզվով նրեք օրինակից:

Հարգանքներով  
տնօրեն

Գոռ Դավթյան



## Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԼԿ փակ բաժնետիրական ընկերության 2009թ. տարեկան ֆինանսական հաշվետվության աուդիտը իրականացվել է համաձայն գործող Աուդիտորական Ստանդարտների:

Ներկայացվող փաթեթը կազմված է հետևյալ բաժիններից.

1. Աուդիտորական եզրակացություն
2. Հավելված՝ Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվություններ




# ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ





## Հավելված

(Կազմակերպության ֆինանսական հաշվետվություններ)



**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**  
Ֆինասական արդյունքների մասին (Ձև 1)

«31» դեկտեմբերի 2009 թ.

«Յանթիս ՍԵՆՏԵՐ» ՈՒՎԿ ՓԲԸ թ. Երևան Ա. Արմենակյան 2/5  
(վարկային կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը)

*(հազ. դրամ)*

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթագրություններ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	3	45,364	
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	4	(9,945)	
<b>Չուտ տոկոսային եկամուտ</b>		<b>35,419</b>	
Շահաբաժնի տեսքով եկամուտներ			
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ			
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր			
Առևտրային նպատակներով պահվող ներդրումներից գուտ շահույթ/(վնաս)	5		
Վաճառքի համար նախատեսված ներդրումներից գուտ շահույթ/(վնաս)	6		
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներից գուտ շահույթ/ (վնաս)			
Արտարժույթային գործարքներից ստացված գուտ շահույթ/(վնաս)	7		
Այլ գործառնական եկամուտներ	8	22,007	
<b>Գործառնական եկամուտներ</b>		<b>57,426</b>	
Վարկերից և այլ փոխառվածություններից առաջացած կորուստներ	9	(19,176)	
Ընդհանուր վարչական ծախսեր	10	(18,666)	
Այլ գործառնական ծախսեր	11	(2,055)	
<b>Շահույթ մինչև հարկվելը</b>		<b>17,529</b>	
Շահութահարկի գծով ծախս /փոխհատուցում/	12	(3,506)	
<b>Շահույթ (վնաս) հարկումից հետո</b>		<b>14,023</b>	
Մեկ բաժնետոմսին ընկնող բազային շահույթ			
Մեկ բաժնետոմսին ընկնող նուսրացված շահույթ			

Վարկային կազմակերպության վարչության նախագահ


Գործադիր տնօրեն՝

Գլխավոր հաշվապահ

Գործադիր Բաղալյան

Գուրգեն Բրուտյան


«ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ ք. Երևան Ա.Արմենակյան 2/  
(վարկային կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը)



	ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթագրու- թյուններ	Հաշվետու ժամանակաշրջան
1	<b>Ակտիվներ</b>		
1.1	Դրամական միջոցներ և բանկային հաշիվներ	13	1,681
1.2	Առևտրային նպատակով պահվող ֆինանսական ներդրումներ	14	
1.3	Բանկերում տեղաբաշխված միջոցներ	15	1,166,487
1.4	Դրամական շուկայում այլ տեղաբաշխումներ	16	
1.5	Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխառություններ	17	730,323
1.6	Վաճառքի համար նախատեսված ներդրումներ	18	
1.7	Այլ գործառնությունների գծով ստացվելիք գումարներ	19	
1.8	Վարձակալության գծով ստացվելիք գումարներ	20	
1.9	Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ,	21	
1.10	Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում		
1.11	Կապիտալ ներդրումներ հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում		
1.12	Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	22	9,161
1.13	Հետաձգված հարկային ակտիվներ	12	
1.14	Ստացվելիք տոկոսներ	23	10,682
1.15	Այլ ակտիվներ	24	21
	<b>Ընդամենը՝ ակտիվներ</b>		<b>1,918,355</b>
2	<b>Պարտավորություններ</b>		
2.1	Բանկերից ստացված փոխառություններ և վարկեր	25	
2.2	Դրամական շուկայից ստացված այլ փոխառություններ	26	
2.3	Հաճախորդներից ներգրավված փոխառություններ	27	
2.4	Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ		737,700
2.5	Վարձակալության գծով վճարվելիք գումարներ		
2.6	Վարկային կազմակերպության կողմից թողարկված արժեթղթեր	28	
2.7	Պահուստներ		
2.8	Վճարվելիք գումարներ	29	
2.9	Հետաձգված հարկային պարտավորություններ		
2.10	Վճարվելիք տոկոսներ	23.1	3,112
2.11	Այլ պարտավորություններ	30	13,020
	<b>Ընդամենը՝ Պարտավորություններ</b>		<b>753,832</b>
3	<b>Կապիտալ</b>		
3.1	Կանոնադրական կապիտալ	31	1,150,500
3.3	Պահուստներ,		
3.3.1	Գլխավոր պահուստ		
3.3.2	Վերագնահատման պահուստներ	32	
3.4	Կուտակված շահույթ (վնաս)		14,023
	<b>Ընդամենը՝ Կապիտալ</b>		<b>1,164,523</b>
	<b>Ընդամենը՝ Պարտավորություններ և կապիտալ</b>		<b>1,918,355</b>

Վարկային կազմակերպության վարչության նախագահ  
(գործադիր տնօրեն)

Գլխավոր հաշվապահ



**Արհեստագծ կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն**  
**Ձև 3**

«31» Դեկտեմբերի 2009 թ.  
«ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ  
ք. Երևան Ա. Արմենակյան 2/5

(վարկային կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը)

**Նախորդ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվը հազար դրամ**

Սեփական կապիտալի տարրերի անվանումը	Կանոնադրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Վերագնահատման պահուստ	Կուտակված շահույթ	Ընդամենը
<b>Հոդվածներ</b>					
Մնացորդը առ 31 դեկտեմբեր.2007թ.					
Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը					
<b>Վերահաաշվարկված մնացորդը</b>					
Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված եկամուտներ և վնասներ					
Ներդրումներ կանոնադրական կապիտալում					
Շահաբաժիններ					
Չուտ շահույթ/ վնաս					
<b>Մնացորդ առ 31 դեկտեմբերի 2008թ.</b>					

**Հաշվետու տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվը**

Սեփական կապիտալի տարրերի անվանումը	Կանոնադրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Վերագնահատման պահուստ	Կուտակված շահույթ	Ընդամենը
<b>Հոդվածներ</b>					
Մնացորդը առ 07 օգոստոսի.2009թ.	150.000				150.000
Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը					
<b>Վերահաաշվարկված մնացորդը</b>	150.000				150.000
Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված եկամուտներ և վնասներ					
Ներդրումներ կանոնադրական կապիտալում	1.000.500				1.000.500
Շահաբաժիններ					
Չուտ շահույթ/ վնաս				14.023	14.023
<b>Մնացորդ առ 31 դեկտեմբերի 2009թ.</b>	1.150.500			14.023	1.164.523

Վարկային կազմակերպության գործադիր տնօրեն *Բ. Մանուկյան* Գործող Բաղայան

Գլխավոր հաշվապահ *Գրիգորյան* Գուրգեն Բրուտյան



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ (Ձև 4)  
«31» դեկտեմբերի 2009 թ

«ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ ք.Երևան Ա. Արմենակյան 2/5  
(վարկային կազմակերպության անվանուճր և գտնվելու վայրը)

(հազ. դրամ)


ԱՆՎԱՆՈՒՄԸ	Նախորդ ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան
<b>1. Դրամական միջոցների զուտ հոսքեր գործառնական գործունեությունից</b>		<b>(1,881,594)</b>
Դրամական միջոցների զուտ հոսքեր մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններ		14,973
Ստացված մեքենաներ		34,683
Վճարված տոկոսներ		(6,832)
Կորուստների վերականգնում		
Ստացված շահաբաժիններ		
Ստացված զուտ կոմիսիոն գումարներ		801
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ		(13,271)
Վճարված հարկեր		(408)
<b>Դրամական միջոցների զուտ հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից</b>		<b>(1,896,567)</b>
Տեղաբաշխված միջոցներ նվազում (ավելացում)		(1,915,970)
Ներգրավված միջոցների ավելացում (նվազում)		191
Առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի արժեթղթերի նվազում (ավելացում)		
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների նվազում (ավելացում)		
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ գործառնական գործունեությունից		19,212
<b>2. Դրամական միջոցների զուտ հոսքեր ներդրումային գործունեությունից</b>		<b>(4,908)</b>
Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթերի նվազում (ավելացում)		
Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումների նվազում (ավելացում)		
Հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում կապիտալ ներդրումների նվազում (ավելացում)		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(4,908)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարում		
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ներդրումային գործունեությունից		
<b>3. Դրամական միջոցների զուտ հոսքեր ֆինանսական գործունեությունից</b>		<b>1,738,200</b>
Վճարված շահաբաժիններ		
Բանկերից ստացված վարկերի ավելացում (նվազում)		
Ստացված այլ փոխառությունների ավելացում (նվազում)		737,700
Վարկային կազմակերպության կողմից բողոքարկված արժեթղթերի ավելացում (նվազում)		
Բաժնետերերի ներդրումները կանոնադրական հիմնադրամում		1,000,500
Ֆինանսական վարձակալության դիմաց վճարվելիք գումարների ավելացում (նվազում)		
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ֆինանսական գործունեությունից		
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		
<b>Դրամական միջոցների զուտ հոսք</b>		<b>(148,302)</b>
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում		150,000
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում		<b>1,698</b>

Վարկային կազմակերպության վարչության նախագահ  
(գործադիր տնօրեն)

Արթուր Բաղայան

Գլխավոր հաշվապահ

Գուրգեն Բրուտյան



**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ  
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (Չև 5)**

**Ծանոթագրություն 1. «Իրավական դաշտ»**

«ՓՄՉ ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպությունը հանդիսանում է փակ աժնետիրական ընկերություն:

- 2009թ. օգոստոսի 7-ին, ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի թիվ 235 Ա որոշմամբ գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկում, որպես «ՓՄՉ ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն (Գրանցման վկայական թիվ90)

«ՓՄՉ ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպության գրասենյակը գտնվում է Արմենակյան 2/5 հասցեում, ք.Երևան:

2009թ.հաշվետու տարում «ՓՄՉ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի աշխատողների միջին թվաքանակը կազմել է 8 մարդ:

**Ծանոթագրություն 2. «Հաշվապահական ստանդարտներ»**

«ՓՄՉ ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են բանկերի և վարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորող ՀՀ բանկային օրենսդրությամբ նախատեսված նորմատիվային ակտերին համաձայն և համապատասխանում են ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտներին և կազմակերպության կողմից մշակված հաշվապահական հաշվառման քաղաքականությանը:

**Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում և ներկայացում**

Հաշվետվությունները կազմվել են, պահպանելով անընդհատության, հետևողականության, հաշվեգրման, հասկանալիության, էականության, միասնականության, արժանահավատության, համադրելիության, հաշվանցման և սահմանազատման սկզբունքները:

Կազմակերպությունում հաշվապահական հաշվառումը վարվում է վարկային կազմակերպությունների համար նախատեսված հաշվային պլանով, հաստատված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 12.10.2004թ. թիվ 251 Ն որոշմամբ:

Հաշվապահական հաշվառման գրանցումները Կազմակերպությունը վարում է Հայաստանի Հանրապետության արժույթով՝ ՀՀ դրամով:

Սույն ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Կազմակերպության հաշվառման գրանցումների վրա, ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ:

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է ղեկավարությունից կատարել այնպիսի գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են գործում ներկայացված գումարների վրա՝ հաշվետու ժամանակաշրջանում: Սույն ֆինանսական հաշվետվությունների գծով առավել նշանակալի գնահատումները վերաբերում են հնարավոր կորուստների պահուստին, մաշվածությանը և ամորտիզացիային և այլ պահուստներին: Գնահատումները հիմնված են այն տեղեկատվության վրա, որը առկա է ֆինանսական հաշվետվությունների ներկայացման օրվա դրությամբ: Հետևաբար, փաստացի արդյունքները կարող են տարբերվել այս գնահատումներից:

### **Եկամուտների և ծախսերի ճանաչում**

Տոկոսային եկամուտներն ու ծախսերը ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Չաշխատող վարկերի և փոխատվությունների գծով, երբ դրանց մայր գումարի և տոկոսների հավաքագրումը կասկածելի է դառնում, տոկոսային եկամուտը չի ճանաչվում: Ոչ տոկոսային ծախսերը ճանաչվում են գործարքների կատարման պահին:

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներն ու ծախսերը, ինչպես նաև այլ հիմնական եկամտային և ծախսային հոդվածները ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արտացոլվում են այն ժամանակ, երբ դրանց գծով գործառնությունները փաստացի կատարվում են:

### **Հարկեր**

Կազմակերպության շահույթի կամ վնասի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Ընթացիկ շահութահարկի գումարը հաշվարկվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների համաձայն: Հետաձգված հարկերը, եթե առկա են այդպիսիք, առաջանում են ակտիվի կամ պարտավորության հաշվեկշռային արժեքի և դրա հարկային բազայի միջև եղած ժամանակավոր տարբերություններից: Ակտիվի կամ պարտավորության հարկային բազան դա գումար է, որը հարկային նպատակներով վերագրվում է այդ ակտիվին կամ պարտավորությանը: Ժամանակավոր տարբերությունների հետևանքով առաջացած հետաձգված հարկային պարտավորությունների գծով, եթե առկա են այդպիսիք, մասհանումները կատարվում են ամբողջությամբ: Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են այն չափով, որքանով որ հավանական է տվյալ ակտիվների իրացումը:

Կազմակերպությունը իր գործունեությունը ընթացքում վճարում է նաև այլ հարկեր, տուրքեր, որոնք ներառված են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության մեջ:

### **Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ**

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության առումով դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են կազմակերպության բանկային հաշիվների մնացորդներից:

### **Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ**

Իր գործունեության ընթացքում Կազմակերպությունն օգտագործում է այլ բանկերում տարբեր ժամանակաշրջանների համար բացված բանկային և ավանդային հաշիվներ: Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գումարները ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած դրանց գծով հնարավոր կորուստների պահուստները:

## **Ֆինանսական գործիքներ**

Կազմակերպությունը ֆինանսական ակտիվները և պարտավորություններն իր հաշվեկշռում ճանաչում է այն դեպքում, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են սկզբնական արժեքով, որն իրենից ներկայացնում է դրանց դիմաց տրված կամ ստացված փոխհատուցման իրական արժեքը՝ համապատասխանաբար գումարած կամ հանած գործարքի հետ կապված ցանկացած ծախսումները:

Կազմակերպության կողմից ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների. ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ, վարկեր և դեբիտորական պարտքեր:

- *Վարկեր և դեբիտորական պարտքեր,*

Վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Կազմակերպության կողմից ուղղակիորեն պարտապանին դրան տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

Կազմակերպության կողմից տրամադրված վարկերի դիմաց ստացվելիք և փոխառությունների դիմաց վճարվելիք տոկոսները հաշվարկվում են տարին ընդունելով 365 օր:

Ֆիքսված մարման ժամկետով հաճախորդներին տրված վարկերն ու փոխառվածությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած դրանց գծով հնարավոր կորուստների պահուստները:

Վարկերը որակվում են որպես չաշխատող, երբ դրանց գծով մայր գումարի և տոկոսների հավաքագրումը կասկածելի է դառնում: Չաշխատող վարկերը կարող են վերադասակարգվել որպես աշխատող, երբ ձեռք է բերվում հիմնավորված համոզվածություն ողջամիտ ժամանակահատվածի ընթացքում պայմանագրով նախատեսված չմարված մայր գումարի և տոկոսների հավաքագրման վերաբերյալ:

Սկզբնական ճանաչումից հետո բոլոր ֆինանսական պարտավորությունները, բացառությամբ ֆինանսական արդյունքներով ճշգրտվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորությունների, որոնք ներառում են նաև առևտրական նպատակով պահվող պարտավորությունները, հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական արդյունքներով ճշգրտվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորությունները հաշվառվում են իրական արժեքով:

Գործառնական վարձակալության շրջանակներում վարձավճարները ճանաչվում են որպես ծախս ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում:

## **Ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ**

Ֆինանսական ակտիվը արժեզրկված է, եթե նրա հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա գնահատված փոխհատուցվող գումարը: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Կազմակերպությունը գնահատում է, թե արդյոք առկա են օբյեկտիվ փաստեր, որ ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը կարող է լինել արժեզրկված:

Ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստի գումարն իրենից ներկայացնում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ֆինանսական գործիքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի (ներառյալ երաշխիքների իրագործումից և գրավների իրացումից փոխհատուցվող գումարները) ներկա արժեքի միջև տարբերություն:

Հատուկ պահուստը ձևավորվում է ռիսկային ակտիվների մանրամասն գնահատման արդյունքում: Ի լրումն, ընդհանուր պահուստի գումարները ձևավորվում են այն ռիսկերի նվազեցման նպատակով, որոնք թեև հատուկ ձևով բացահայտված չեն, սակայն գոյություն ունեն վարկային կազմակերպությունների ակտիվների ցանկացած պորտֆելում: Վարկերի կորուստների գծով պահուստի գումարի ընդհանուր փոփոխությունը գրանցվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Դեկավարության կողմից պահուստի գումարի գնահատումը կատարվում է ելնելով անցյալում կորուստներ ունենալու Կազմակերպության փորձից, ՀՀ ԿԲ պահանջներից, պորտֆելին ներհատուկ և նրանում գոյություն ունեցող ռիսկերից, բացասական բնույթի իրավիճակներից, որոնք կարող են ազդեցություն թողնել վարկը մարելու վարկառուի հնարավորությունների վրա, ինչպես նաև ապավիճածություն հանդիսացող գրավի գնահատված արժեքից և ընթացիկ տնտեսական պայմաններից:

Վարկերի հնարավոր կորուստների գումարի գնահատումը նախատեսում է որոշակի դատողություններ: Այն դեպքում, երբ հնարավոր է դառնում, որ Կազմակերպությունը կոնկրետ ժամանակաշրջանում կարող է ունենալ որոշակի կորուստներ, որոնք հիմք են հանդիսանում պահուստի ձևավորման համար, վարկային պորտֆելին բնորոշ վնասներն հատուցելու համար բավականաչափ պահուստի գումարի որոշումը իրականացվում է ղեկավարության կողմից կատարվող համապատասխան դատողությունների հիման վրա:

Երբ վարկի գումարը դառնում է անհավաքագրելի, այն դուրս է գրվում համապատասխան պահուստի հաշվին: Եթե պահուստին հատկացումներ կատարելուց հետո տեղի ունեցող դեպքերի արդյունքում պարզ է դառնում, որ հնարավոր կորուստի գումարը փոքրանում է, ապա համապատասխան պահուստի հակադարձման գումարը գրանցվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Կազմակերպությունը ակտիվների դասակարգումը և հնարավոր կորուստների պահուստների ձևավորումը իրականացնում է ՀՀ օրենսդրության պահանջների և «ՓՄՁ ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպության բաժնետերերի ժողովի որոշմամբ հաստատված «Վարկերի և դեբիտորական պարտքերի (ակտիվների) դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի համաձայն:

#### *Իրական արժեքով հաշվառվող ակտիվներ*

Եթե իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի գծով վնասը ճանաչվել էր ուղղակիորեն սեփական կապիտալում և առկա է օբյեկտիվ վկայություն, որ ակտիվն արժեզրկված է, ապա կուտակված զուտ վնասը, որը ճանաչվել էր ուղղակիորեն սեփական կապիտալում, հանվում է սեփական կապիտալից և ճանաչվում է հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, նույնիսկ, երբ ֆինանսական ակտիվը չի ապաճանաչվել:

## Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը:

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիան կատարվում է համաձայն «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված նվազագույն ժամկետների:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Տոկոսադրույք (%)
Համակարգիչներ	1	100%
Այլ հիմնական միջոցներ	5	20%
Գույք և գրասենյակային սարքավորումներ	5	20%

Մինչև 50,0 հազ. դրամ արժողությամբ հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետը սահմանված է մեկ տարի :

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները՝ ավելի շատ, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից, կհոսեն դեպի Կազմակերպություն: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած արդյունքը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներառվում է գործառնական եկամուտներում:

## Հատկացումներ սոցիալական ապահովագրության հիմնադրամին

Կազմակերպությունում, աշխատակիցների աշխատավարձի հիման վրա հաշվարկված որոշակի տոկոսը կենտրոնական գանձապետարան փոխանցելուց բացի, այլ հատուկ կենսաթոշակային հիմնադրամ չի ձևավորվում: Նշված հատկացումների հետ կապված ծախսերը արտացոլվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակաշրջանում, որին դրանք վերաբերվում են:

**Պահուստներ, պայմանական ակտիվներ և պարտավորություններ**


Պայմանական պարտավորությունները չեն ճանաչվում ֆինանսական հաշվետվություններում, այլ բացահայտվում են ծանոթագրություններում: Սակայն պայմանական պարտավորությունները չեն բացահայտվում, երբ դրանց մարման նպատակով տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսքի հնարավորությունը շատ փոքր է:

Պայմանական ակտիվները չեն ճանաչվում ֆինանսական հաշվետվություններում, այլ բացահայտվում են, երբ դրանց հետ կապված տնտեսական օգուտների ներհոսքը հավանական է դառնում:

Պահուստը ճանաչվում է, երբ Կազմակերպությունն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածների գծով հնարավոր կորուստների պահուստի ստեղծման ընթացակարգը համապատասխանում է հաճախորդներին տրամադրված վարկերի և փոխատվությունների գծով հնարավոր կորուստների պահուստի ձևավորման ընթացակարգին:

Գործադիր տնօրեն՝



Ա. Բադալյան

Գլխավոր հաշվապահ՝



Գ. Բրուտյան